

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

SOMMAIRE

PAGE

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ 121
ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԻԱՆ Հ. Ն. — Հայոց կղզիին 250-ամեակը. 1717-1967 (Շար. 3) . . . 121

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ 125
ԶԻՐԱԲԵԱՆ Հ. ՔԵՐՈՐԵՆ. — Դանիել վրդ. ի Ասորոյ՝ Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի (Շար. 5) . . . 125

ԱՆԱՆԻԱՆ Հ. ՊՕՂՈՍ. — Ոսկան վարդապետի նամականի (Շար. 2) . . . 130

ԳԻՒՐԵՆԻԱՆ Յ. — Նոր նիւթեր երեմիա Զէլէ-պի Քեօմիւրճեանի մասին (Շար. 3 եւ վերջ) . . . 143

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ 135
ՃԵՄՃԵՄԻԱՆ Հ. ՍԱՀԱԿ. — Մկրտութեան հորհուրդի բանաձեւը . . . 135

ԼԵԶՈՒԱԿԱՆ 150
ՄԵԽԻԹԱՐԵԱՆ ՅԱԿՈԲ Մ. — Արքայապետ Միսի-բար Սեբաստացու շարահիւսական ըմբռնումները (Շար. 1) . . . 150

ԿՐՕՆԱԿԱՆ 160
ՋԵԿԻԻԱՆ Հ. ԼԵՒՈՆ. — Վատիկանեան Բ. Ժողովի հետեւեցումը — Արդի ֆաղափար-բուրժուան եւ եկեղեցին (Շար. 2) . . . 160

ԳՐԱԿԱՆ 154
ԵՐԵՄԻԱՆ ԱՐԱՄ. — Անտիկ էջեր Զարմաշալի Ժողովրդական առակներից եւ սրամտու-րիւններից (Շար. 1) . . . 154

ՄԱՏԱԶ ԷՄԻՆԻՔ. — Մարդուն Ողբերգութիւ-նը. տեսիլ Գ. Թրգման. Հ. Ա. Ֆ. (Շար. 4) 166

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ. — Երբ բանաստեղծը մեռաւ 177

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ 179
ԳԻՒՐԵՆԻԱՆ Յ. — «Վրացական մանրանկար-չութիւն», գրեց՝ Շ. Ամիրաշվիլի. Մոս-կուա, 1966 . . . 179

ԳԻՒՐԵՆԻԱՆ Յ. — «Պատմութիւն Փարէզի եւ վեցնայի, նաեւ Պատմութիւն վեցնայի ֆաղափ», աշխատասիրեց՝ Փրոֆ. Կարոյ Մելիք-Օհանջանեան. Երեւան, 1966 . . . 182

ARTICLE DE FOND
DER-NERSESSIAN P. N. — Le 250ème an-
niversaire de l'Ile des Arméniens: 1917-
1967 (Suite) . . . 121

PHILOLOGIE
TCHERAKIAN P. CHERUBIN. — «Exégèse
des Psaumes» de Daniel le Syrien
(Suite) . . . 125

ANANIAN P. PAUL. — Les lettres d'Oskan
Vardapet (Suite) . . . 130

KURDIAN H. — Nouvelles découvertes sur
Yérémiia Tchélébi Keumurdjian (Suite
et fin) . . . 143

LITURGIE
DJEMDJEMIAN P. SAHAK. — La formule
du sacrement de baptême . . . 135

LINGUISTIQUE
MEKHITHARIAN HAKOB M. — Les idées
syntaxiques de l'Abbé Mekhithar de
Sébastie (A suivre) . . . 150

RELIGION
ZEKIYAN P. LEON. — A la lumière du Va-
tican II^e — La civilisation moderne et
l'Eglise (Suite) . . . 160

LITTÉRATURE
YEREMIAN ARAM. — Pages inédites de
proverbes et d'anecdotes satiriques de
Tcharmahal . . . 154

MADACH IMRE. — La tragédie de
l'homme: Scène IV^e; trad. par P. A. F.
(Suite) . . . 166

ARSENE YERGATH. — Quand le poète est
mort . . . 177

RECENSIONS
KURDIAN H. — «Miniature géorgienne»,
de Ch. Amirashvili, Moscou, 1966 . . . 179

KURDIAN H. — «Histoire de Paris et de
Vienne, Histoire de la ville Venise»,
publiées par le Prof. K. Mélikh-Ohan-
djanian, Erévan, 1966 . . . 182

Direzione - Amministrazione - Abbonamenti — Isola San Lazzaro - 30100 Venezia (Italia) - Tel. 60-104
Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia
Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia

1-11 083



1843 - 1967
ՃԻՆ. Տ Ա Ր Ի
ԹԻՒ 6 - 8
ՅՈՒՆԻՍ - ՕԴՈՍՈՍ

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXXV^o année, 1967, N. 6 - 8 Juin - Août

ՅԻՇԱՏԱԿԻ ԽՈՇԵՐ

ՀԱՅՈՑ ԿՂԶԻԻՆ 250ԱՄԵԱԿՐ (1717 - 1967)

Գ.

Միսիթարի զործը չզաղրեցաւ անոր մահով. հանճարեղ հիմնադիրը վերադառնալ ծնաւ իր յաջորդներուն մէջ, զերդ ար- շալոյս մշտանորոգ:

1749ի Ապրիլ 27ին վաւերացաւ Ս. Ղա- ղարու Ծննդոց Գրքի առաջին զուգը մի- տին. ու բացուեցաւ իսկոյն երկրորդը, որ մեղի պիտի պատմէ Հայոց կղզիին ան- զրանիկ պաշարներն ու յաղթանակները:

Սուրբ Ղաղարցիներու փոքրիկ բանակը տենդաղին աշխատանքի է նուիրուած՝ այդ շրջանին, վերածնունդի լուսաւոր զաղափարականով խառնելու: Եր- կու աշխատանք զուգահեռաբար կը կա- տարուի, շինարարական ու գրական. նախ՝ հայրենիքի վերածնունդ համար ցուրտ նժդեհաւայրը, երկրորդ՝ ստեղ- ծելու համար հոն մշակոյթի տաք աղութ մը: Միսիթարի ծրագիրն է՝ զոր կը հե- տապնդեն անոր խոնարհ հետեւորդները, լոյսին ճաճանչներուն բոլորաթիւն հաւաք-

ուելով Պոլիսէն, զաւառներէն ու Եւրո- պայի հայաբնակ զաղութներէն:

Եւ Հայոց կղզիին պատմութեան եր- կրորդ շրջանը (1749-1814) սկիզբ կ'առնէ զարմանալի պահու մը:

1749ի Ապրիլ 28ին — Միսիթար Արքաճօր մահուան ճիշտ յաջորդ օրը — Ս. Ղաղար կու զան տառներկու զործաւորներ, որմ- նաղիրներ եւ հիւսեր, նախապէս կատար- ուած զաշխատութեան մը համաձայն՝ սկսելու համար զանդակատան շինութիւ- նը. անոր հիմերը զրուած էին արդէն վեց տմիս առաջ:

Ու մինչ կը յառաջանար յուզարկաւոր- ներու տիրադէմ թափօրը, եւ շարական շարականի կը համբուրուէր՝ մոմերու լաւահառաջ հեծկրտանքներով, Միսիթա- րի յողնավառական մարմինը յանձնելու համար գերեզմանին, քիչ անդին՝ եկեղե- ցիին ճիշտ քովի կը՝ աղիւս աղիւսի վրայ կը շարուէր տակաւ. մուրճերու կոփիւնն

ԳՕ-ԳԴԵ

և ուրազներու չխնայող տարօրինակ մահերդ մը կը հիւսէին՝ դէպի երկինք բարձրացող զանգակատան ստորոտէն. մահուան խորհուրդին դէմ՝ յարութեան հաւատքը կը քանդակուէր, եւ զանգակատունը՝ անոր խորհրդանիշ:

Աշխատանքը կը քալէ ձեւընթաց. նոյն տարուան Յուլիսի 11ին, արդէն իսկ զանգակներու բարձրութեան կը հասնին երեսուն մեղր՝ զետինէն. կը յօրինուի, յաջորդաբար, իւրաքանչիւր զմբէթը, եւ 1750ի Յուլիսին՝ հանդիսաւոր արարողութեամբ կը զետեղուին երեք մեծ զանգակները:

Չանգակատան ձեւը կը պարտինք Ս. Ղազարու հնարագիւտ Հայրերուն. իսկ զմբէթին զծաղրութիւնը կը կատարէ Ստեփանոս Մելքոնեան Արքահայրը: Չանգակատան պատին վրայ կը զետեղուի եռեւ երկաթեայ մեծ ժամացոյց մը, արդիւնք՝ Հ. Ղուկաս Սեբաստացի հանձարեղ միաբանին ճարտարութեան:

Հայոց զանգակները... անոնց դռնը կը բռնէ հիմա ամբողջ լճակը, մինչեւ վեհնետիկ. եւ ուրախ վանականները զանոնք կը յանձնեն հեռացող կռուներէն, Հայոց աշխարհին տալու աւետիս:

Հիւանդներու եւ բորոտներու աղիւղորմ հեծեծանքը չէ՛ որ պիտի բարձրանայ ալիւսհետեւ աշուղդին. ան հիմա ունի ի՛ր զանգակները, ի՛ր երգը, ի՛ր շարականը, ի՛ր զրազարանը... վաղը պիտի ունենայ նաեւ ի՛ր տպարանը:

Մխիթար Արքայօր նման, անոր յաջորդն ալ՝ իր շինարար գործունէութիւնը կը սկսի Աստուծոյ տունէն:

1751ի Յուլիս-Օգոստոս ամիսներուն՝ եկեղեցին կը կերպարանափոխուի: Աւագ խորանը, որ բեմին առաջակողմեան մասին վրայ կը զտնուէր, աստիճաններուն կից, ետեւն ունենալով դասը՝ ժամերգութեան համար — հինէն մնացած ձեւն էր, զոր Մխիթար պահած էր, առժամեայ նորոգութիւններ կատարելով միայն — կը տեղափոխուի հիմա շուրջ չորս մեղր դէպի ետ, վերաբերումի համար փոքր անցք մը միայն թողլով խորանին ետեւը:

Բեմը կը մարմարապատուի, եւ կեղրոնը կը փոխադրուի Մխիթար Արքայի դերեղմանը, որ մինչ այն՝ վարը դասին մէջ կը գտնուէր: Իսկ նոր դասը կը յօրինուի բեմէն վար, ու մէկ աստիճանով ալ կը դատուի տունէն: Այսպէս, հայկական ձեւ մը կ'առնէ տաճարը, յարմարելով մեր ծէսին: Քանի մը տարի ետք՝ Ս. Ղազար կ'այցելէ Յարութիւն Վրդ. Բասենցի, որ տեսնելով վանքի եկեղեցին՝ մաքուր ու վայելուչ, շատ կը զննատէ զայն եւ յատկապէս դասը, զոր կը գտնէ յար եւ նման Ս. Էջմիածնի տաճարի դասին, միայն թէ՛ անկէ աւելի փոքր:


Եկեղեցիէն աշխատանքը կը փոխադրուի զրազարան. 1754ին կը զարդանալուի առաստաղը՝ Թիեփուլի աշակերտ վարպետի մը կողմէ (Francesco Zugno). 1756-59ի շրջանին՝ կը յօրինուին զեղեցիկ դարանները, տանձափայտէ, իսկ այլուրեւեական պղնձեայ թուահամարները պիտի զետեղուին 1791ին: Հետզհետէ կ'աճի թիւը ձեռագիրներուն:

1755ի ժամանակները, վանքի հիւսիս-արեւելեան փոքրիկ աղատ հողամասին վրայ կը շինուի թղթատուն մը, իրը բլտեմարան՝ վաճառելի զրքերու եւ կապարեայ տառերու:

1767ին, հիմնական նորոգութիւններ կը կատարուին վանքի պարիսպին վրայ: 1779ին կը մարմարապատեն սեղանատան յատակը: 1788ին կը կառուցուի առաջին փոքրիկ տպարանը՝ կղզիին հիւսիս-արեւելեան անկիւնը, թղթատան մօտիկ: 1798ին, զանգակատան վրայ կը զետեղուի զերմանական մեծ ժամացոյց մը: 1805ին, եկեղեցւոյ կից, դէպի հարաւ, կը կառուցուի մեծ աւանդատուն մը. կ'ընդարձակուի տպարանը, եւ կ'աւելցուի երկրորդ մամուլ մը:

Այդ օրերուն՝ վանքը ունէր նաեւ «տաք տուն» մը. այսպէս կը կոչուէր այն սենեակը՝ ուր զետեղուած էր մեծ վառարանը. հոն կը հաւաքուէին միաբանները, ճաշէն եւ ընթրիքէն ետք, քիչ մը տաքնալու համար, ձմեռ եղանակին:

Բայց վանականներու ցուրտ խուցերը



Ս. Ղազար՝ 1750 թուականին, հիւսիսակողմէն՝ վեհնետիկէն տեսնուած:

խակական կրակարաններ էին արդէն մշակոյթի եւ դիտութեան, ազօթքի խնկարոյր օծութեամբ ջերմացած:

Ահա՛ Հայոց կղզին, Մխիթարի մահէն ետք՝ առաջին վաթսմամեակի ընթացքին:

Վանքի հին ժամանակագիրը գրուածութիւնը կը նկարագրէ նաեւ հերոսական ջանքերը այդ ժիր վանականներուն, որոնք հակառակ իրենց աղքատութեան եւ տընտեսական չափազանց համեռու պայմաններուն, զերմարդկային ճիւղեր կը թափեն, պայքարելով մինչեւ անգամ տարերային ոյժերու դէմ, ի պաշտպանութիւն իրենց բոյնին սիրական:

Մենք, 1966ին, սարսուռով աղանաւես եղանք ջուրերու աննախընթաց ողորմի մը, որուն զօրծած վնասներն ու աւերը իսկապէս քոտմնելի էին ու հսկայական: Սուրբ Ղազարի ժամանակագրութեան հաստատիւր առաջին հատորը՝ հինգ անգամ կը հնչեցնէ այդպիսի ահաւոր ահազանգ, մինչ ջուրերը կատաղաբար կը խուժեն վանքի սրտին մէջ, ողողելով վայրագաւիթները, սեղանատունն ու եկեղեցին. վանքին փուռը կը փճանայ եւ ջրհորներն անգամ կը լեցուին աղի ջուրով...:

Կղզին շատ փոքրիկ էր այն շրջանին ու շատ ցած. ծովու ալիքներն ամէնի թափով կը հարուածէին վանքին խեղճուկ պարիսպներն ու պատերը. եւ ջուրը դիւրութեամբ կը մտնէր ներս, մանաւանդ արեւմտեան մայր դուռէն: Այսպէս 1750ի Նոյ. 9ին, 1762ի Հոկտ. 26ին, 1770ի Նոյ. 2ին, 1783ի Մարտ 12ին եւ 1792ի Դեկտ. 24ին:

Ողողումներէն դատ, որոնք պարբերական երեւոյթ կ'առնեն, ա՛յլ անսկիւալ պատահարներ եւս կու գան խռովել հայ վանականները: Այսպէս, 1755ի Օգոստոս 7ին՝ տեղատարափ անձրեւ եւ կարկուտ՝ ծովանման կը լճացնեն վանքը, կը ջարդուին շէնքերու բոլոր ապակիները: Իսկ 1786ի ձմեռուան ահեղ քամին կը խորտակէ արեւելեան պարիսպը: Միւս կողմէ, խոնավութիւնն ու աղը կը կրծեն հետըզհետէ վանքին որմերը, նոյնիսկ Մխիթար Արքայօր կառուցած նոր յարկաբաժինները:

Չարմանալի պիտի չըլլայ, հետեւաբար, եթէ վանքի ժամանակագիրը, զանազան թուականներու տակ, յաճախ յիշատակէ նորոգութիւններ՝ վանքի ստո-

բին յարկի յատակներու, ծեփերու, ներկերու. նորոգումներ՝ ջրհորներու, պարիսպի, փուռի և հիւրանոցի (1759, 1768, 1779, 1782, 1787, 1789, 1791):

Մխիթարէն առաջ, ուրիշներ, Դոմինիկեան և Յիսուսեան կրօնաւորներ, փորձած էին՝ որոշ շրջաններ՝ վարձել Ս. Ղազար կղզին. բայց ծովուն ախորժանակ անակնկալներէն յուսարեկ, մանաւանդ ձմեռնային խոնաւ մշուշէն և ճահճային կլիմայէն յաղթահարուած, քիչ ժամանակ ետք՝ լքած էին կղզին: Մխիթարի և անոր յաջորդներուն հայկական կուրուին ու աննկուն կամքն հարկաւոր էր՝ սանձելու համար բնութեան տարրերը և հայոց կղզին պահելու կանգուն: Թերեւս Սեւանի կամ Նարեկի վանականներու հոգին իջած էր Ս. Ղազար:

Եւ սերունդներ սերունդներու կը յաջորդեն հոն՝ իբր ապահով նաւահանգիստի մէջ, անշարժ խորիսխներով ամբարացած. անոնք միաժամանակ խորանալով և հմտանալով հայագիտութեան բազմազան ճիւղերուն մէջ, կը ստեղծեն վերածնունդի երկինք մը փայլուն, միջազգային զնահատանքի դասիւններ խլելու պատրաստ:

Չամչեան, Աւետիքեան, Ազեբեան. ահա՛ համաստեղութիւնը վերածնունդի երկինքին, որ բոց է համակ, վահագնեան շողերով:

Թեւակոխած ենք արդէն 1800ական թրւականները:

Քաղաքական մարդին մէջ, նսեմացած է վենետիկի հասարակապետութեան համարուն ու զօրութիւնը. տոժերու չքեղ

փառքերէն մնացած են միայն պալատներն արուեստի, և Մեծն Նափոլէոնի խիղախ լեզէոնները կ'արչաւեն Խալիա, աւստրիացիներէն խլելու վենետիկը հրաշալեւ. վանքը կ'ապրի սարսափի օրեր, բնաջնջումի սպառնալիքին տակ: Լճակին մէջ ցիրուցան սփռուած կղզիները, հնամենի վանքեր, հետզհետէ կը մերկանան իրենց փառքերը և վանականները կը ցրուին անտիրական:

Բայց Ս. Ղազար ունի իր կազմակերպեալ ընծայարան՝ գալրոցը, իր ձեռագրատունն ու գրադարանը. ունի պատրաստ մտաւորականներ ու լեզուագէտ անդամներ. զիջած է անբաւ տաղձ՝ մշակութային մեծղի հրատարակութիւններու համար, հրապարակ հանած է պատմական ու լեզուաբանական կոթողային աշխատութիւններ, կը պատրաստէ դասական մեծ բառարանը, կը ծրագրէ հայ մատենագիրներու շարքը ոսկեղէն:

Ստեփանոս Ազոնց Արքահայրը, աներկիւղ, կը ներկայանայ Նափոլէոն Առաջինի, վենետիկի մէջ, 1807ի վերջերը, ի պաշտպանութիւն Ս. Ղազարի: Ահեղ աշխարհակալին սուրը կը կասի Հայոց կղզիին մշակութային արժէքներուն դիմաց, և ի յարդանս հայ զիտնական վանականներուն՝ ազատ կ'ընէ անոնց վանքը բռնադրաւումի ընդհանուր օրէնքէն, ու կը ճանչնայ Ս. Ղազարը իբր զիտական կաճառ, հայ մշակոյթի ակադեմիա, Մխիթարեան ճեմարան:

1810. թուականն ենք:

(Շար. 3)

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

ԴԱՆԻԷԼ ՎՐԴ.Ի ԱՍՈՐԻՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՅ ԴԱԻԹԻ

(Շար. տե'ս «Բագմավէպ» 1967, ք. 3-5, էջ 69)

Ե.

ՔՆՆՈՒԹԻՒՆ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՍ ՍԿԻՋԲԸ
ԶԵՏԵՂՈՒԱԾ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՆ,
ԵՒ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՍԱՂՄՈՍԱՅ ԽՄԲԱԳԻՐ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ

Յովհաննէս և Դանիէլ վարդապետներու միջև փոխանակուած երկու նամակներէն կը տեղեկանանք թէ Եւսեբի վանքին վանահայր՝ Յովհաննէսի խնդրանքով է որ Դանիէլ ձեռք կը դարնէ իր մեկնութեան. նամակն ունի հետեւեալ սկզբնաւորութիւնը. «Թուղթ աղաչանաց զոր գրեաց աստուածաւորն Յովհաննէս հայր վանաց Երանելոյն Եւսեբի, որ ի Քափրիա Պերթայի, առ մեծն Դանիէլ քահանայ և վարդապետ, վասն մեկնութեան Սաղմոսաց»:

Որքան ալ անձանթ է մեղի թէ ո'վ էր այս վանահայրը, որու համար մեծամեծ

զովեստներ ունի Դանիէլ, իր պատասխանին մէջ, կը տեղեկանանք սակայն Տիւփալի ասորական մատենադրութենէն¹, ուր երբ խօսք կ'ըլլայ Գէորգ Եպիսկոպոսի մը վրայ (էջ 373), կ'ըսէ թէ ծնած էր ի Քափրա Պէյթ Կարմէի մէջ, և Սելեւկիոյ պատրիարքական աթոռը նստած (661-680): Ափրիկէի Եպիսկոպոսներու ցանկին մէջ ալ կը գտնենք, որ երբ 484ին՝ Մաւրիտանացի ներկայացուցիչներ, 53րդ կարգի մէջ, Կարդալինէ կ'երթան, Հուսիսի վանտալ թագաւորի հրամանով, Եպիսկոպոսական աթոռը Քափրա կը կոչուէր:

Աստեմանի՝ Յովհաննէս Ապամէացի կրօնաւորի համար կը դրէ². «Ծնած է 25-լէզեռնայի Ապամէն քաղաքի մէջ, շուրջ վեցերորդ դարուն, կրօնաւորական կեանք վարած է այն նշանաւոր վանքերէն մէկուն մէջ, որ Որոնդէս գետին շուրջ բազմութեամբ կը գտնուէին³:

1. R. DUVAL, Anciennes littératures chrétiennes, II, La littérature syriaque, Paris 1907.
2. J. S. ASSEMANI, Bibliotheca Orientalis Clementina - Vaticana 1719, 1721, 1728.
3. Ապամէա, Փոլիսիոյ Կեղէնէս մայրաքաղաքի մօտ (Ալիւսի Գլք. Աշխ. էջ 517). Իսկ Պամիա՝ այն է Ապամիա (էջ 572), Ազի գետին աջակողմը, Սելեւկիացոց Համայն քաղաքին հիւսիսը: Իսկ Dictionnaire d'Archéologie Chrétienne կը դրէ. Եփեսոսէ վերջ կարեւորագոյն քաղաքը, փոքր Ասիոյ մէջ, այսօր Կէօյիւքէր կոչուած, Փոլիսիոյ երկրորդ մայրաքաղաքը: Մինչ Dict. d'histoire et de géographie ecclésiastiques (հտ. Գ. սիւն 915-919) չորս Ա-

պամէա կը ներկայացնէ, Եպիսկոպոսանիստ. մին՝ Բիթանիոյ, երկրորդը՝ Փոլիսիոյ, երրորդը՝ Պիսիդիոյ, չորրորդը՝ մայրաքաղաք (Բ) Սիւրիոյ: Ասոնց մէջ կան Յովհաննէս անունով Եպիսկոպոսներ, ըստ Մանսիի, սակայն անստույգ կը մնայ խնդրոյ առարկայ վանահայրը, և տարակուսական՝ Եպիսկոպոսական աստիճանի բարձրացած ըլլալը: Հ. Ալիւսան նկարագրելով Կիւղնոսի ստորին հովիտը, կը յիշէ Պարթէնիա քաղաքը՝ հիմնուած Պարթեւնիոսի անունով (Սիսուսի էջ 263). և Մարոքի բարձրաւանդակներու վրայ խօսած ատեն՝ կը յիշէ Քափրայ բարձրաւանդակը (Գլք. Աշխ. էջ 465):